Ա. Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ

Նոր Ջուղայի քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքը բազմաթիվ ուսումնասիրությունների առարկա է դարձել։ Այն քննարկվել է հայ-ռուսական, ռուս-իրանական կամ հայ-իրանական հարաբերությունների, առևտրական առնչությունների, մշակույթի զարգացման և այլ տեսանկյուններից։ Տեղի արհեստներին այս աշխատություններում անդրադարձել են այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել հարցադրումների բացահայտմանը։ Այնինչ, արհեստագործությունը Նոր Ջուղայի կյանքի ամենակարևոր բնագավառներից էր, որը հետաքրքիր է ոչ միայն իր բազմազանությամբ և ինքնատիպությամբ, այլև՝ արտադրանքի որոշակի իրերի համաշխարհային շուկայում ունեցած դերով։

XVII դ. առաջին տարիներին Սպահանի արվարձան դարձած Նոր-Ջուղայի բնակչությունը արտակարգ կենսունակությամբ սկսեց վերականգնել հին Ջուղայից ժառանգած իր կենցաղը, այն հարմարեցնելով հասարակական-քաղաքական կյանքի նոր պայմաններին։ Մի քանի տարիների ընթացքում Նոր Ջուղայում կառուցվեցին ապարանքներ, տներ, եկեղեցիներ։ Ըստ գաղթած վայրերի Նոր Ջուղան բաժանվեց թաղամասերի. ջուղայեցիների, թավրիզեցիների, երևանցիների և այլն։ Յուրաքանչյուր թաղամաս ուներ իր սոցիալական, ինչպես նաև կրոնական (լուսավորչական և կաթոլիկ) բաժանումները։ Դինեվաճառներն ապրում էին Փոքր Մեյդան թաղում (կամ «Ղտրագեալ»), որի կենտրոնական փողոցն էլ կոչվում էր Շիրախանե։ Թավրիզեցիների թաղամասում ապրում էին ցորենավաճառները, կտավագործները, ոստայնակները ու հյուսները։ Բրուտագործները կենտրոնացված էին Հակոբջանենց կամ «պրուտենց» թաղում։ Քոչերն թաղում (սանգթրաշ—քարտաշ) ապրում էին քարհատները։ Թավրիզեցիների և Ջարսում թա-

զամասերում բաղնիքներ կային։ 1654—55 թթ. շահ Աբբաս II-ը Սպահանից Նոր Ջուղա արտաքսեց Երևանից գաղթած բնակչությանը, որն իր թաղամասը ստեղծեց։ Այստեղ ութ բաղնիք կար[1]։

Նոր Ջուղայի արհեստավորները խմբավորված չէին ընկերություններում կամ համքարություններում, ինչպես դա ընդունված էր հայկական այլ քաղաքներում կամ ավաններում։ Նորջուղայեցիների համար օրինակ կարող էին ծառայել նաև վաղ ծագում ունեցող իրանական էսնաֆությունները, որոնց կանոնադրության մեջ կարևոր տեղ էր տրվում անդամագրվողների կրոնական պատկանելիությանը[2]։

Հեռու հարազատ վայրերից, հոգևոր կենտրոնից, օտարության մեջ, մահմեդականությանը ենթարկվելու ամենօրյա վտանգը զգացող, սեֆյան տիրակալների քմահաճույքին ենթակա նորջուղայեցիներն իրենց քալանթարներն ունեին, որոնք ղեկավարում էին կղզիացած համայնքը և միջնորդ հանդիսանում համայնքի և Իրանի արքունիքի միջև։ Գաղթօջախի արհեստավորությունն ինքնին մի մեծ ընկերություն կամ էսնաֆություն էր։ Ինքնապաշտպանությունը համախմբում էր նորջուղայեցիներին։ «Բազումք 'ի գաղթականաց անտի գալով արհեստաւորք իւրաքանչիւրոք վաստակօք արհեստին իւրոյ գտաներ զապրուստ»—գրում է Հ. Տեր-Հովհաննիսյանցը[3]։

Նոր Ջուղայի արհեստների մասին ունեցած մեր տվյալները շատ սուղ են։ Գաղթավայրի պատմության հեղինակ Հ. Տեր-Հովհաննիսյանցն իր աշխատության երկրորդ հատորի վերջում հիշատակում է մի շարք արհեստների անուններ. հացթուխ, ներկարար, չարվադար (քարավանապետ), դերձակ, ոսկերիչ, ոստայնակ, հյուսն, փերեզակ (մանրավաճառ), դարբին, որմնադիր, սափրիչ, կոշկակար, համեստակար, նպարավաճառ, մսավաճառ, ցորենավաճառ և գուլպայավաճառ։ Նա հիշատակում է նաև 140 տուն տնայնագործ-գուլպայագործների մասին (հիմնականում կանայք), որոնք տարին 25.000—30.000 զույգ գուլպա էին գործում արտահանման համար[4]։ Նույն տեղում նա նշում է, որ Նոր Ջուղան տարին 130—140 հազար (երևի՝ արշին) կտավ էր արտահանում։

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի Մատենադարանում պահպանվել է հայերեն և անգլերեն շարադրված անավարտ մի ձեռագիր, որը պարունակում է ոմն Ֆրանչեսկոյի հարցազրույցը Մարդամում (Ամստերդամ) վաճառական խոջա Սաֆարի հետ[5]։ Նույն այս երկխոսությունը, որոշ ճշտումներով տպագրվել է «Արամեան լեզուին գանձ» գրքույկում[6]։

Այն հարցին, թե «Ի՞նչ գլխավոր սանիաթ (արհեստ—Ա. Ս.) կա

Հայոց մեջ» իմա՝ Նոր Ջուղայում, խոջա Սաֆարը պատասխանում է. «Ամենայն հասարակ սանիաթ մեր ազգին մեջ կայ. ինչպես ասենք դերձիք, գթակակար, բաբուչկար, գալլաք, խառատ, դուրգար, որմնադիր, ոսկերիչ, դարբին, ջուլհակ, գրագիր, կազմարար, ծաղկարար, ներկարար, մագաղաթագործ, ապրշմագործ, զառբաֆ (ոսկեկար անող), նաղդաքու (պաստառագործ), սահաթսաղ, տպագիր, բասմաչի (կաղապարագործ), և այլ բազումս»։ Այստեղ թվարկված շատ արհեստներ ոչ միայն հնագույն ծագում ունեն, այլև մասնագիտականացման որոշակի ավանդներ, որոնք ձևավորվել և կազմավորվել են միջնադարում[7]։

Նոր Ջուղան ուներ նաև իր մտավորականությունը. պատմիչ, աջուդ, ուսուցիչ, գրիչ, ծաղկող, նկարիչ, մանրանկարիչ, թարգմանիչ և այլն։ Օրինակ. անգլերենի թարգմանիչ էր աղա Դավիթը, գաղթավայրում շատ հարգված մի անձնավորություն, որին հետագայում թաղեցին սբ. Մինաս եկեղեցու խորանի մոտ։ Նշանավոր էին տոլմաչները՝ թարգմանիչները, որոնք գիտեին նաև ռուսերեն ու աշխատանքի էին անցնում Մոսկվայի Կրեմլի Դիվանագիտական ատյանում (Թավաքալով եղբայրները, Գ. Լուսիկովը, Ռոմադամսկին և այլք)։ Նոր Ջուղայում ձեռագրեր էին ծաղկում, որը բազմարնույթ արհեստների գիտակ անձնավորությունների կարիք ուներ։ Ժամանակի նշանավոր մանրանկարիչներից էին Խաչատուր Ջուղայեցին, Մեսրոպ և Խաչատուր Խիզանցիները, Ստեփանոս Ջուղայեցին, Հայրապետը և այլք[8]։

Մի քանի արհեստավորների անուններ են պահպանվել. Հովհաննես Քարտաշը, կոշկակար Վարդանը, խառատներ Մարգարն ու Սահակը, ջուլհակներ Ավետն ու Փանոսը, փինաչիներ Զաքարիան ու Նիկողայոսը, դաբաղ Մարգարը, ոսկերիչներ Աբգարը, Խաչիկը, Փանոսը, սազանդարներ Ավետն ու Խաչիկը։

Հայ ժողովրդի պատմության մեջ է մտել դերձակ Թումիկի (Թոմասի) անունը։

Խաչատուր Կեսարացու Նոր Ջուղայի առաջնորդ դառնալուց (1620 թ.) մի փոքր անց, տեղի են ունենում մի խումբ արհեստավորների աղանդավորական ելույթները։ Դա հիմնականում հակալուսավորչական երևույթ էր, բայց ուներ նաև որոշակի սոցիալական դիրքավորում։ Աղանդավորականները ժխտում էին Քրիստոսի աստվածային ծագումը, նրա կյանքին առնչվող երևույթները. Հարությունը, Ահեղ Դատաստանը։ Չէին ընդունում նաև խաչը, պատարագը, հաղորդությունը, լուսավորչական եկեղեցու յոթ խորհուրդները և այլն։ Հոգևոր առաջնորդներին, վարդապետներին, քահանաներին և եկեղե-

ցական այլ պաշտոնյաների նրանք խաբեբա էին անվանում։ Այնքան նշանակալից է դառնում այս աղանդի դերը հասարակական կյանքում, որ Խաչատուր Կեսարացին ստիպված է լինում 1642 թ. հատուկ Սինոդ հրավիրել և աղանդի ղեկավար դերձակ Թումիկին խիստ դատապարտել։ Թումիկի գաղափարակիցն էր նաև Սև Պետրոսը[9]։ Հավանաբար հենց այս աղանդի ուսմունքի դեմ էր ուղղված Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի Հովսեփ Հարեմաթացու եկեղեցու նկարազարդումներում Լուսավորչական եկեղեցու յոթ խորհուրդները պատկերող նկարների ընդգրկումը[10]։

Այս սուղ տեղեկություններին օգնության են գալիս նյութական մշակույթի բազմաթիվ օրինակներ, որոնք հնարավոր են դարձնում որոշակի պատկերացումներ ունենալ Նոր Ջուղայի արհեստների վերաբերյալ։

Նոր Ջուղան ուներ վանք, 24 եկեղեցի, ապարանքներ, արևելյան շինարարությանը բնորոշ տներ (դրսից հարթ ու սվաղված պատեր, ներսում բակ, ղեպի որը դուրս էին գալիս պատշգամբները, սենյակների դռներն ու լուսամուտները)։ Բակը փողոցի հետ էր կապվում կամարաձև միջանցքով և փայտյա դարպասով։

Նոր Ջուղայում զարգացած էր քարգործությունը։ Տեղում քարհանքեր չկային։ Քարը բերվում էր բավական հեռու գտնվող լեռներից։ Քարը տաշվում էր հմուտ վարպետների կողմից։ Քարից նորջուղայեցի վարպետները կամուրջներ են կառուցել Զայանդեռուդ գետի վրա՝ շահի հանգստյան փոքր սենյակներով (Ալավերդի խանի կամուրջը), կառուցել են եկեղեցիներ։ Քաղաքը հատուկ ճարտարապետ ուներ, որի օրավարձը 6 շահի էր[11]։ Քարից պատրաստում էին եկեղեցիների պատերի մեջ ագուցվող խաչքարեր կամ նվիրատվական սալիկներ, որոնք պարզ ձև ունեին և կրում էին իրանական արվեստի որոշակի ազդեցությունը. սլաքաձև վերին մաս, պարզ ծաղիկներ և այլն։ Այդպիսիները պահպանվել են սբ. Հովհաննեսի եկեղեցում (1610—1648 թթ. պատրաստված), ավելի պարզ օրինակները սբ. Գևորգ եկեղեցու ավագ խորանի ճակատային մասում (1610 թ.)։ Միաժամանակ, շարունակելով հայկական միջնադարյան մշակույթում կարևորագույն բնագավառ կազմող խաչքարերի արվեստը, վարպետները ստեղծում են նոր կոմպոզիցիաներ, որոնք իրենց դեկորով բոլորովին այլ ոճական խումբ են կազմում։ Հին Ջուղայի խաչքարերի օրինակներով ստեղծված փոքրաչափ նմուշները այդ արվեստի վերջին արձագանքներն են։

Նորջուղայեցիները քարից, բազալտից շիրմաքարեր էին պատրաստում, որոնք պատմա-մշակութային ուսումնասիրության հարուստ նյութ են ներկայացնում։ Ի տարբերություն հին Ջուղայի, որտեղ ընդունված էր խաչքարն ու խոյատիպ քանդակը, այստեղ պատրաստում են ոչ այնքան բարձր, երկարուկ քառանկյունիներ, որոնց վրա ամրացվում են առանձին մշակված նեղ սալաքարեր։ Սալաքարերի հարդարանքի, նրա ձևավորման մեջ հատկապես հանդես է դալիս քարը մշակող և ձևավորող վարպետների գեղարվեստական ճաշակը։ Տապանաքարերի շրջերիզի մեջ հաճախ արձանագրություններ են տեղավորում, իսկ ողջ տարածքի վրա փոխադրում են հիմնական կոմպոզիցիան։ Այն մեծ մասամբ թելադրված էր հանգուցյալի մասնագիտությունից։ Շիրմաքարի կենտրոնում նրա կանգնած կամ նստած ֆիդուրն է, որի հագուստն ու առանձին մանրամասները «պատմում են» նրա կյանքի մասին։ Ընտիր փորագրություններ ունեցող շիրմաքարերից են «սազանդար Ծատուրը», «սահաթսազ Սահակը», «բրուտագործ Գալուստը», ասեղնագործուհին», «գորգագործուհին», «դարբինը», «ակնոց պատրաստողը» և այլն[12]։

XVII դ։ վերջում, երբ Նոր Ջուղայում, ինչպես նաև Մպահանում, որտեղ նույնպես հայ քարտաշներ ու որմնադիրներ էին աշխատում, դադարեցրին քարե կառույցների շինարարությունը, հայ արհեստավորները գաղթում կամ պանդխտություն էին գնում։ Շահ Աբբաս II-ը ցանկանում էր կանխել այդ արտահոսքը և որոշակի արտոնություններ էր տալիս նրանց, որը սակայն արդյունավետ հետևանք չունեցավ։

Նոր Ջուղայի շենքերը հիմնականում աղյուսից էին պատրաստում, որը աղյուս թրծողներ էր պահանջում։ Աղյուսը թրծում էին քաղաքի շրջակայքում հսկայական պաշարներով կուտակված ընտիր կավից։ Աղյուս շարողները հմուտ վարպետներ էին (օրինակ, Բեթղեհեմի եկեղեցու գմբեթը)։ Նրանք աղյուսից երկհարկանի տներ էին շարում, սենյակների ներսի պատերի մեջ սլաքաձև փորվածքներ էին անում, որոնք տարբեր նշանակումներ ունեին. պահարան, նկարի հարթություն և այլն։ Ընդունելության սենյակների պատերի տարածքների որոշ հատվածներ կտրտում էին երաժշտական գործիքների ուրվագծերով։ Դրանք խորություն ունեին, որոնց միջով անցնում էին երաժշտական հնչյունները և յուրօրինակ արձագանքով ետ վերադառնում։ Միաժամանակ, այդ փորվածքները խախտում էին պատերի միօրինակ հարթությունները։ Այդպիսի փորվածքներով էին ձևավորված խոջա Սաֆարի, Տեր-Գրիգորի ապարանքները, ինչպես նաև այլ մասնավոր տներ

ու Սպահանի նշանավոր Ալի Ղափու պալատի երաժշտական դահլիճը[13]։ Յուրաքանչյուր տուն ջրհոր ուներ, որը պատրաստում էին գործին հմուտ մարդիկ։ Տներն ունեին նաև իրենց սեփական հնձանները, կարասներն ու գինետները։ Ընդհանրապես, ամենաանհրաժեշտ արհեստներից էր բրուտագործությունը։ Բրուտագործական իրերի այնքան մեծ պահանջարկ կար, որ Նոր Ջուղայում այդ արհեստավորների հատուկ թաղամաս գոյություն ուներ։ Սվաղողները պատի սվաղի վրա նկարչական ձևավորումներ էին անում։

Նոր Ջուղայում զարգացած է եղել որմնանկարչությունը։ Վանքերն ու եկեղեցիները նկարազարդվել են Հին և Նոր կտակարանի թեմաներով, որտեղ առաջնահերթ են եղել Քրիստոսի, Աստվածամոր, սրբերի, պատմական գործիչների կերպարները, տերունական սյուժեները, Լուսավորչական եկեղեցու խորհուրդները և այլն։ Հրավիրվել են ինչպես եվրոպացի, նույնպես և տեղի նկարիչները։ Ամենափրկիչ վանքի նկարազարդումները Խաչատուր Ջուղայեցին որակում է որպես «յոյժ գեղեցիկ և Ամենաչքնաղ յօրինուածովք, և ոսկեհամուկ և երփներանգ որակօք ի ներքուստ պճնազարդ տեսութեամբ գեղազարդեալ։ Այլ և՝ գեղեցկանկար և փառազարդ խորհրդական պատկերօք (զհինն ի նորս ածանցաբար բաղդատելով) ծագէ ի ծագ և համասփիւռ զարմազան և հրապաճոյճ գեղգեղեալ»[14]։

Նոր Ջուղայի տաղանդավոր նկարիչներից էր Մինասը։ Նրա շնորհը փայլել է տարբեր բնագավառներում. հաստոցային նկարչություն, որմնանկարչություն, ձեռագրերի նկարազարդում։ Նա նկարել է թեմատիկ պատկերներ, դիմանկարներ, բնանկարներ՝ առաջացնելով ժամանակակիցների հիացմունքը։ Ապարանքների նկարազարդումներում նա ներմուծել է շրջապատող իրականությունից վերցված տեսարաններ[15]։ Մինասը միաժամանակ «հմուտ էր բժշկական արուեստի, մարդկայնոց ներհակ կրից և հիւանդութեան և չորից տարերաց խառնուածոց, և դեղօրէից բնութեան և կազմելոյն ևս առաւել սպեղանեաց կազմելոյ և զվերս բժշկելոյ։ Եւ այլ ևս բազում և զանազան արուեստից հմուտ գոլով սորա»[16]։

Նույնպիսի բազմակողմանի ընդունակությունների տեր էր Հովհաննես Մրքուզը (1643—1715)։ Լինելով հմուտ դավանաբան, փիլիսոփա և թարգմանիչ, Հովհաննես Մրքուզը ոչ միայն ղեկավարել է Ամենափրկիչ վանքի նկարազարդումները, այլև զբաղվել է կոշկակարությամբ, ջուլհակությամբ, դերձակությամբ և ժամաոործությամբ։ Բաղ-

մակողմանի և անշահախնդիր գործունեության համար նա արժանացել է «տիեզերալույս» կոչմանը[17]։

Նոր Ջուղայի եկեղեցիները ձևավորվում էին հախճապակե դեկորատիվ սալիկներով, որոնցից շքեղ օրինակներ են պահպանվել դեռևս 1619 թվից։ Ավետարանական սյուժեները, կապույտ, կանաչ և դեղին գնարակով ստացված բուսական հարուստ զարդանախշերը, նվիրատվական արձանագրությունները հայ վարպետների բարձր կարողությունների վկայություններն են (ընտիր օրինակներ են պահպանվել Բեթղեհեմի, սբ. Աստվածածնի, սբ. Թոմայի և Ամենափրկիչ վանքի եկեղեցիներում)։

Նոր Ջուղայում փայտի գործի հմուտ վարպետներ կային։ Նրանք ոչ միայն լուսամուտների ու դռների փեղկերն էին ձևավորում, այլև փայտե փոքր կտորներից ճառագայթաձև վարդակներ էին պատրաստում և դրանցով ձևավորում պատշգամբների առաստաղները, եկեղեցիների դռներն ու միջնորմները (խոջա Սաֆրազի տունը, Աղանուրի տունը, մի շարք եկեղեցիներ)[18]։ Այդ փայտե շրջանակներում երբեմն նկարազարդ փայլարներ էին տեղադրում, լուսամուտների և առաստաղի ձևավորման մի ձև, որը լայն տարածում ուներ Իրանում[19]։ Նոր Ջուղայի ամենահմուտ վարպետներից էր Հակոբջանը (?—1671), որը պալատական հյուսների ղեկավարն էր, Խաչատուր Կեսարացու տպարանական գործընկերը[20]։

Նոր Ջուղայի նկարչության և փայտի գեղարվեստական փորագրության ընտիր օրինակ է սբ. Գևորգ եկեղեցում պահպանված խաչը։ Կարմերանգ փայտը նուրբ փորագրված է, իսկ վրան ավետարանական 24 տեսարաններ են նկարված (Ավետում, Ծնունդ, Մկրտություն, Խաչելություն, Խաչից իջեցում, Հարություն, Համբարձում, Ղազարոսի հարությունը, Հիսուսն ու սամարացի կինը և այլն)։ Խաչը պատրաստվել է 1666 թ., խոջա Ապովի պատվերով[21]։

Փայտի գործի վարպետներ էին Նոր Ջուղայի տպարանի առաջին գործիչները, որոնք իրենց ղեկավար Խաչատուր Կեսարացու հետ ինքնուրույն, գործին անտեղյակ, տառեր փորագրեցին և առաջին գրքերը տպագրեցին[22]։

Նոր Ջուղա այցելած եվրոպացի ճանապարհորդները հիացական տողեր են թողել տեղի բնակչության ապրելակերպի մասին[23]։ Նրանց հիացրել են կրոնավորների շքերթային տարազները, խոջայական տներում տեղի ունեցած հյուրասիրությունների ժամանակ սեղաններին դրված սպասքը, դահլիճների կահավորումները և այլն։ Առաս-

տաղից ջղթաներով կախված պղնձյա և երկաթյա լամպերով ու լուսամփոփներով էին տոնական օրերին լուսավորում սենյակները։ 1646 թ. պատրաստված ընտիր կանթեղ կա Ամենափրկիչ վանքի թանգարանում, որը դրվագված է ավետարանական տեսարաններով։ Կենցաղում ընդունված էր պղնձյա ամանեղենը, այդ թվում՝ սկուտեղները, որոնք տարբեր ուտելիքների ու մանր սպասքների համար էին (պղնձե թասի մի օրինակ պահպանվել է Էջմիածնի վանքի հին վեհարանում, Մատաղ №408)։ Հախճապակե իրերը, հատկապես կանաչ ջնարակով ձևավորված ամանեղենը, Նորջուղայեցիները բերում էին Չինաստանից, իսկ արծաթյա և փայտե ամանները տեղական արտադրանք էին։

Նոր Ջուղայում զարգացած էր ոսկերչությունը, որի տեխնոլոգիան հնուց եկած ավանդներ ուներ։ Նոր Ջուղայի ոսկերիչները ևս իրերը պատրաստում էին այնպես, ինչպես նույն այդ գործը կատարվում էր Հայաստանի այլ վայրերում և հին Ջուղայում։

Գինու արծաթե ոսկեզօծ մի փարչ պահպանվել է Հ. Քյուրտյանի հավաքածուում[24]։ Արծաթից մասնատուփեր էին պատրաստում, վրան ոսկեթել ասեղնագործ սյուժետային տեսարաններ էին ամրացնում։ Օրինակ, Հովհաննես Մկրտչի գլխատման արևելականացված տարբերակը Ամենափրկիչ վանքի թանգարանի մասնատուփի վրա[25]։ Հայտնի էին Նոր Ջուղայի ձեռագրերի կազմերը։ Գաղթավայրերից Կաֆան (Ղրիմը), Կ. Պոլիսը և Նոր Ջուղան հայտնի էին իրենց կազմերի արվեստով[26]։ Ամենափրկիչ վանքի թանգարանում պահպանվում է դեռևս 1619 թ. պատրաստված ավետարանի մի կազմ, իսկ խաչելության տեսարանով մեկ այլ կազմ՝ 1648 թվի է։ Արծաթյա երկու կազմ պահպանվել են Էջմիածնի վանքի Գանձատանը, ունի պարզունակ նկարչություն և խոջա Թումենց Գրիգորի պատրաստածն է (1768 թ., Մատաղ №№ 280, 281)։ Նորջուղայեցիները տղամարդկանց արծաթյա գոտիներ ու կանացի բազմաթիվ զարդեր էին պատրաստում։ Նշանավոր էին տեղական սկիհները (պարզ մի օրինակ՝ Ամենափրկիչ վանքի թանգարանում)։

Նոր Ջուղայի եկեղեցիներն այնքան հարուստ էին թանկարժեք սպասքով, որ 1720 թ., ժողովրդի չքավորության պատճառով, եկեղեցիները պարտավորվում են «զարծաթի զարդս եկեղեցյացն տալ 'ի վճար անիրաւ հարկին»։ Հարկ են տալիս. «բուրվառ, փոքր ու մեծ խաչեր, սաղավարտի խաչեր, արծաթե սաղավարտներ, կանթեղ, տապանակ, սկիհ, մաղզման, ըսկու ավազան, ձեռնախաչ, պատվանդան, խաչերի խնձորներ, քշոց, ճաճանչ, մեռոնաման, արծաթով բռնած սաղավարտ,

սկիհի պատվանդան, քամար, ավետարանի կոստղ, վակաս, ավետարանի գաշա, խաչի պատվանդան, քսուր արծաթեղեն հնենց»[27] (մոտ 16,5 լիտր և կես չարեք։ Մոտ 100 կգ արծաթեղեն ու ոսկեղեն)։ Նոր Ջուղայում տոնական այնպիսի մեծ խաչեր էին պատրաստում, որ թափորի ժամանակ դրանք մի քանի մարդ էր տանում։ Խոջա Նաղարի տան հյուրասիրության ժամանակ (1628 թ. ապրիլի 15) «բաժակներն ու գավաթներն ամբողջովին ոսկուց էին, իսկ վարդաջրերի սրվակներն ու Շիրազի գինիների բաժակները՝ ապակուց»[28]։ Նոր Ջուղայի գերեզմանատանը պահպանվել են ոսկերիչների տապանաքարեր, որոնց արձանագրություններից հայտնի են դառնում մի քանի վարպետների անուններ. Հայրապետ (մահ. 1647 թ.), Մելքում (մահ. 1650 թ.), Դավլաթիարը (մահ. 1651 թ.), Սահակը (մահ. 1673 թ.), Ալավերդի (մահ. 1691 թ.), Ավետիքը (մահ. 1694 թ.), սրա հայրը՝ Զաքարը (մահ. 1695 թ.) և այլն։ Ուշագրավ է, որ նույն գերեզմանատանը թաղված է եվրոպացի ոսկերիչ Լուի Ռոբերտը (մահ. 1673 թ.)։ Կան նաև արխիվային փաստաթղթերում պահպանված ընծայագրեր. Աղաշանի որդի Խաչատուրի (1642թ.), Կոստանդի (1704 թ.) և այլն[29]։

Նորջուղայեցիների արհեստներում առաջնակարգ տեղերից մեկը գրավում էր գործվածքների արտադրությունը։ Նրանք գործում էին ամենապարզ բամբակյա կտորներից մինչև ամենարարդ ու ամենաթանկ հյուսվածքները [30]։ Գողթն գավառում, այդ թվում նաև հին Ջուղայում գոյություն ունեցող ոստայնանկի աշխատանքի մասին պատկերավոր տողեր է թողել Մատթեոս Ջուղայեցին (XIV դ. վերջ—XV դ. սկիզբ) իր «Քննութիւն գործոց առաքելոց» գրքում։ Ահա այն. «Ոստայնանկ, ցորժամ ոստան հենէ, նախ չափէ ղմի թելն և ապա հենէ. և ի գործելն՝ ոտիւքն և ձեռօք վճարէ. և զինչ գործէ՝ ծրարէ ի վերայ սալմնաին ոչ գիտելով, թե զինչ գործեաց՝ մինչև վճարէ. և ի վճարելն հատանէ, և ապա դարձեալ յետ տա ի սալմնէն, և կրկին չափէ, և տեսանէ զգործն. թէ բարի է՝ փառաւորի ի տեսանելն զնա, և թէ գարշէ՝ տրտոր. և ի ծախելն կրկին փառաւորի՝ զգինս առնելով աշխատանաց իւրոց»[31]։

Նոր Ջուղա այցելած ճանապարհորդները նկարագրում են խնջույքի սեղանների ոսկեթել ու արծաթաթել ծածկոցները, մետաքսե ու թավիշե բարձերը, վարագույրները, որոնք շլացնում էին իրենց փափկությամբ, նրբությամբ ու շքեղությամբ։

Կարևորագույն կտորներից էին. դիպակը՝ մետաքսաթել, արծաթաթել ու ոսկեթել ամենանուրբ կտորը, ալտաբասը, աքսամիտը,

ասպրան, թավիշը, բեյբերակը, բյազը, գոլը, չիթը, գաբան, դոբանգը, զարբաֆը, զենդենը, ղուֆը, խոզը, քամքան, գենժեն, կինդյակը, քիսեյան, միակալը, շիդը, սիֆթենգին, տաֆտան, օբյաբը և այլն։ Կոնստան Ջուղայեցին, իր առևտրական գործի ուսուցման «դասագրքերում» տեղավորած խնդիրների համար օգտագործում է «ատլաս, զառբաֆ, խարայ, մուխիյար» և այլ կտորների անուններ[32]։ Ամենարարդ գործվածքներից էր քիմխա կամ նաշիճ կոչված թանկարժեք կտորը։ «...զի զվարազ ոսկին ի վերայ մորթոյ կանցնեն և մանր թել կտրեն, ե այնպէս հնարեն ի գործելն, որ այն բարակ թելին ոսկին երեսն ի վեր լինի. և վասն այսորիկ դժուար է այս գործ քան զամենայն ինչ...»—գրում է Մատթեոս Ջուղայեցին[33]։ Կտորների այսօրինակ հարստությունը պայմանավորված էր Իրանի և, հատկապես նրա նոր մայրաքաղաք Սպահանի արհեստավորական հետաքրքրություններից։ Այս կտորների փափկությունը, ձևավորման հարստությունը, զարգանախշերի բազմազանությունը և գունային հնչեղությունը հիմք էր դարձել համաշխարհային շուկայում նրանց ունեցած մեծ համարմանը։ Պատահական չէ, որ երբ XVII դ. վերջում և XVIII դարի սկզբին Ռուսաստանում սկսեցին խրախուսել մետաքսագործական ֆաբրիկաների հիմնադրումը՝ առաջիններից էին նորջուղայեցիներ Իգնատ Շերիմանը, Ստեփան Խալդարովը, Ղուկաս Շիրվանովը, Վասիլի Խաստատովը։ Ռուսական մետաքսագործության բարձրագույն արտահայտություններից էր Մոսկվայի մոտ գտնվող Ֆրյանովո գյուղի Լազարյանների ֆաբրիկան, որի համար նրանք օգտագործում էին Իրանի (նաև՝ Նոր Ջուղայի) մետաքսագործության փորձը, մասնագետներին, կատարելագործելով այն, հարմարեցնում էին տեղական ճաշակին։

Ճանապարհորդների հիշատակություններում տեսնում ենք «հրնդկական գունագեղ սփռոցներ» անվանումը, որը վերաբերում է դաջե սփռոցներին։

Նոր Ջուղայի դաջազարդ կտորների նմուշներ պահպանվել են որպես՝ ձեռագրերի կազմերի աստառներ։ Նոր Ջուղայից չիթը, միտկալը կամ քաթանը ուղարկվում էր Հնդկաստան, որտեղ դրանք հատուկ մշակման էին ենթարկվում, ապա ետ էին բերվում և կաղապարների միջոցով ձևավորվում էին տեղական վարպետների կողմից[34]։ Մի քանի վարագույրներ ու դարի մի ընտիր շապիկ է պահպանվել Վիկտորիայի և Ալբերտի թանգարանում[35], իսկ XVIII դ. վերջում պատրաստ-

ված մի գրակալի ծածկոց՝ Էջմիածնի Մայր տաճարի թանգարանում (Գործվածք N 609)։

Նոր Ջուղան դերձակներ ուներ, որոնք բնակչության հագուստներն էին կարում։ Նորջուղայեցիների տարազը սկզբնական շրջանում պահպանեց իր նախկին տեսքը, իսկ ժամանակի ընթացքում ներմուծեց պարսկականից թելադրված ազդեցություններ։ Ճանապարհորդների վկայությամբ հայ կանայք տարբերվում էին պարսկուհիներից ոչ միայն նրանով, որ փողոց էին դուրս գալիս երեսը բաց, այլև իրենց ճոխ հագուստներով։ Կանայք վերևից թակալա էին հագնում, որի մեջքն ու գոգը բաց էր, գլխին մի քանի վաթեթ էին կրում, վրան՝ կոտ, կապում էին քթկալ, «արկանեն զլանջածածկոցն որ մանդիլ կոչի», իսկ ամռանը գլուխը ծածկում էին թոռով կամ շղարշով[36]։ Արդուզարդի մեջ օգտագործում էին թանկարժեք քարեր ու գաղտիկուռ։ Գլխակապի տակ կապում էին երկշար ոսկե դրամներ, իսկ հարդարանքի մյուս կտորների վրա ամրացնում էին արծաթե կամ ոսկու վարակներ։ Հագուստների մեջ նախասիրությունը տալիս էին ոսկեթել սատինին կամ թավիշին, ընտրելով կարմիր և դեղին գույները։ Կանայք բաց կանաչ էին սիրում, իսկ տղամարդիկ նախընտրում էին մուգ կանաչը։ Գոտիները լայն էին, արծաթաթել, տարբեր տեսակի քարերով ընդելուզված ճարմանդներով։ Ուլունքները մարջանից էին կամ ոսկե դրամներից։ Կրում էին ոսկե մատանիներ և ապարանջաններ[37]։ Նորջուղայեցիների տարազների մասին պատկերացումներ ենք կազմում մի շարք տներում պահպանված գեղանկարչական աշխատանքներից. խոջա Սոլթանը, Նորջուղայեցի ամուսինները (Ա. Տեր-Բարսեղյանի տունը), Գերաք աղան, Մինասի նկարած Ոսկան և Հակոբջան Վելիջանյանները (Ամենափրկիչ վանքի թանգարան) դերեղմանոցարերի հարթաքանդակներից և այլն[38]։

Նոր Ջուղայում գործված կտորներից կարում էին նաև հոգևորականների տոնական զգեստներ. շուրջառ, խույր, վակաս, բազպան, եմիփորոն և այլն։ Նորջուղայեցի կանայք հայտնի էին իրենց ասեղնագործությամբ։ Այնքան նշանավոր էին նրանց աշխատանքները, որ դրանք անվանվում էին «արմանի բաֆի»՝ հայի կար։ Երբեմն հագուստները ասեղնագործվում էին նաև մարգարիտներով, ընդելուզվում թանկարժեք քարերով[39]։ Եկեղեցական մի շարք հագուստներ պահպանվել են Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թանգարանում, ինչպես նաև

Էջմիածնի վանքի թանգարաններում. խոջա Դավթի և նրա որդի Գրիգորի նվիրաբերված, գույնզգույն կիսաթանկարժեք քարերով ընդելուզված կերպասյա խույրը (1653 թ., Գործվածք № 333), շուրջառի խաչը (1626 թ., Գործվածք № 176), ասեղնագործ վականները (1691 թ., 1679 թ., Գործվածք №№ 118 և 44) շուրջառի հատվածը (1610 թ., Գործվածք № 81), խաչելության տեսարանով կերպասյա շքեղ շուրջառը (XVII դ., Գործվածք № 78) և այլն։

Հայտնի էին Նոր Ջուղայի գորգերը, որոնց մեջ կային նաև ասեղնագործ օրինակներ։ Կոստան Ջուղայեցին իր խնդիրների մեջ օգտագործում է ասեղնագործ գորգի հումար կտոր գնելու օրինակ[40]։ Նոր Ջուղայում պատրաստված ասեղնագործ գորգի մի ընտիր օրինակ պահպանվել է Էջմիածնի վանքում։ Գորգի կենտրոնում ասեղնագործված է Պետրոս I-ի դիմանկարը, իսկ վերևում, հրեշտակների բռնած ժապավենի վրա ասեղնագործված է «Որբ ենք» բառը (XVIII դ. սկիզբ, Գործվածք № 6)։

Այն համարում ունեին թանկարժեք քարեր մշակողները։ Թանկարժեք քարերը Նոր Ջուղա էին բերվում ինչպես Իրանի տարբեր շրջաններից, նույնպես և Հնդկաստանից ու արաբական երկրներից։ Նոր Ջուղայում կային թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի հղկողներ, ոսկեթերթեր դրվագողներ ու դաջողներ (բասմա) և հարակից մասնագիտության տեր մարդիկ։

Ինչպես տեսնում ենք նորջուղայեցիները աշխատասեր մարդիկ էին։ Արհեստները նրանց համար ոչ միայն ապրուստի միջոց էին, այլև գոյության պահպանման միջոց։ Արհեստները նրանց գեղարվեստական մտածողության բարձր արտահայտություններն էին։

Նոր Ջուղայի արհեստները սերտորեն շաղկապված էին տեղի բնակչության կենցաղին, նիստուկացին, սովորություններին։ Այդ արհեստները շարունակում էին ինչպես հայկական միջնադարյան արվեստների ու արհեստների ավանդները, նույնպես և հին Ջուղայում հիմնավորվածը։

Նոր Ջուղայի արհեստները ոչ միայն տվյալ գաղթավայրի աղգագրության և կիրառական արվեստի արտահայտություններն են, այլև XVII դ. հայ ժողովրդի մշակույթի կարևոր օղակներից։

А. В. СТЕПАНЯН

РЕМЕСЛА НОВОЙ ДЖУЛЬФЫ

Резюме

Общественно-культурная жизнь Новой Джуги XVII века неоднократно являлась источником научных исследований. Однако вопрос ремесел Новой Джуги впервые исследуется в данной статье, как отдельная и важная область общественно-культурной жизни армянской колонии.

Население Новой Джуги было разделено на сословия, где особое место занимали ремесленники. Историко-литературные источники, а также сохранившиеся образцы ремесленного и декоративно-прикладного искусства (Алмазный трон, надгробные плиты, росписи домов и церквей, изделия из меди, камня, произведения ювелирного искусства, набойки и т. д. из музеев Лондона, Москвы, Еревана, Новой Джуги) дают возможность восстановить систему ремесел армянской колонии в пригороде столицы Ирана-Исфагане.

Ремесленное производство Новой Джуги находилось в тесном взаимоотношении как с укладом жизни новоджугинцев, так и с устоями иранских ремесел. Одновременно оно своими корнями опиралось на традиции средневековых ремесел Армении.

1 Հ. Տեր-Հովհաննիսյանց, *Պատմություն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. II, Նոր Ջուղա, 1881, էջ 278։*

2 *Իրանի էսնաֆությունների մասին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում 1857 թ. ապրիլի 2-ին Գ. Շերմազանյանի պատասխան-նամակը Գ. Ախվերդյանին։* Վ. Արուհամյան, *Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում։ Եր., 1971, էջ 212—216։*

3 Հ. Տեր-Հովհաննիսյանց, *նշված աշխ., հ. I, Նոր Ջուղա, 1980, էջ 80։*

4 Հ. Տեր-Հովհաննիսյանց, *նշված աշխ., հ. II, էջ 286։*

5 Հ. Տեր-Հովհաննիսյանց, *նշված աշխ., հ. 1, էջ 184։*

6 *Ամստերդամ, 1711, էջ 341—342։*

7 Բարկեն Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ. հ. 1, Երևան, 1958, հ. 2, Երևան, 1964։*

8 *А. Б. Геворкян.* Искусство копирования армянских миниатюр по памятникам Крыма, Новой Джульфы и Константинополя (XVII в.). Автореферат, Ереван, 1972, с. 8—12.

9 Զաքարիա Սարկավագ, Պատմագրություն, հ. II, Վաղարշապատ, 1870, էջ 69։ Խաչատուր Ջուղայեցի, Պատմություն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 117։ Մանր ժամանակագրություններ. XIII—XVIII դդ. հ. I, կազմեց Վ. Հակոբյանը։ Երևան, 1951, էջ 302—303, Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմությունից, գիրք II, Երևան, 1959, էջ 694։

10 Լուսավորչական եկեղեցու յոթ խորհուրդները պատկերող ասեղնագործ մի վարագույր (XVII դ. հավանաբար Նոր Ջուղայում գործված) պահպանվում է Հայաստանի պետական պատմության թանգարանում։

11 Հ. Տեր-Հովհաննիսյան, նշված աշխ., հ. I, էջ 80։

12 Նոր Ջուղայի գերեզմանատան շիրմաքարերի վերականգնված ընդօրինակումներ է արել սպահանարնակ նկարիչ Աբրահամ Գուրգենյանը, որի աշխատանքներից մի քանիսի լուսանկարները տեղադրում ենք ներկա ժողովածուում։

13 Karapet Karapetian, Isfahan, New Julfa. The Houses of the Armenians. I Roma, 1974, fig. 169, 179:

14 Խաչատուր Ջուղայեցի, նշված աշխ., էջ 142։

15 Տե՛ս Մանյա Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII—XVIII դարերում, Երևան, 1974, էջ 25—32։

16 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 413։

17 Խաչատուր Ջուղայեցի, նշված աշխ., էջ 209—210։

18 Karapet Karapetian, նշված աշխ., fig. 295, 316, John Garswell, New Julfa Oxford, 1968, p. 68, 69, 70, 71 b.

19 Նոր Ջուղայից Մոսկվա գնացած նկարիչ Բոգդան Սալթանովին այսպիսի լուսամուտներ պատրաստելու հանձնարարություն է տրվում, փոքրիկ Պետրոս Դլեքսեևիչ թագաժառանգի սենյակի լուսամուտները ձևավորելու. ներսից դուրս ամեն ինչ երևա, իսկ դրսից ներս չերևա։

20 Հովհ. Աբրահեյան, Նոր Ջուղայու հայերուն առևտուրը ԺԷ դարում։ —Անահիտ, Փարիզ, 1908, № 4, էջ 31—36. Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938. էջ 1303։ А. И. Успенский, Царские иконописцы и живописцы XVII века. Словарь. М., 1910, с. 238.

21 Հ. Տեր-Հովհաննիսյան, նշված աշխ., հ. I, էջ 182—190։

22 Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. I, Երևան, 1977, էջ 353։

23 Какаш и Тектандер, Путешествие в Персию через Московию. 1601—1603 гг. М., 1896; Адам Олеарий, Подробное описание путешествия голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах. М., 1870; Adam Olearii, Ausfuhrliche Beschreibung der Kundbaren Rayss nach Moscow und Persien,. ., Schleswig, 1646; Pere Raphael du Mans, Estat de la Perse en 1660 :., Paris. 1890; Tournefort Pitton de, Relation dûn Voyage du Levant, Paris, T. II, 1718; Doulier Desland Andre, Les Beauter de la Perse on la Description de ce qui de plus curieux dans ce royaum... . Paris, 1673; Chardin Jean de, Voyages du Cacvalier Chardin en Perse et autres Lieux de l'Orient. Paris, 1811; A Chronicle of the Carmelites in Persia and the Papel mission of the XVII and XVIII centuries, vol. I, London, 1939.

24 Հ. Ֆյուրտլան. Ակնարկ մը հին հայ արծաթագործության վրա։ —Դեղունի, Վենետիկ, 1950, հորելյանական համար, էջ 77։

25 John Carswell, նշված աշխ., էջ 83։

26 Հ. Տեր-Ղևոնդյան, Մատենադարանի արծաթյա ձեռագրակազմերը մասին։ —Էջմիածին, 1961, ԺԲ, էջ 50։

27 Սերիկ Դավթյան, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երևան, 1931, էջ 135—136։

28 Herbert Sir Thomas, Travel in Persia, New York, 1929, p. 121—122. Նոր Ջուղայի հայ ապակեգործները միջտ աշխատել են պարսկական արքունիքում։ 1816 թ. վարպետներից էին Բաբել Ջաբարյանը, Մանուկ Խաչիկյանը, Ալեքսի Դիոնիսյանը, իսկ Հարություն Տեր-Խաչատրյանը, «Ճարտարապետն էր նույն ապակեկործացու։ Հ. Տեր-Հովհաննիսյանց, նշված աշխ., հ. I, էջ 402։

29 Լ. Մինասյան, Ոսկերչությունը Նոր Ջուղայում, Նոր Ջուղա, 1983, էջ 32, 73, 82, 99, 102, 117։

30 Ա. Օլեարիուսը գրում է, որ Սպահանի շրջակայքում 1460 ավան և գյուղ կա, որոնց բնակիչները հիմնականում ջուլհակագործությամբ են զբաղվում։ Հայտնի է, որ այդ բնակչության մեջ հայերը զգալի թիվ էին կազմում։ Адам Олеарии. Նշված աշխ., էջ 733։

31 Լ. Խաչիկյան, Մաաթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը։ —Բանբեր Մատենադարանի, 1956, № 3, էջ 78։

32 Կոստանդ Ջուղայեցի, Ցաղագս վաճառականութեան։ ԺԸ դար։ Մատենադարան, ձեռ. № 5994։ Նույնի, Ժողովածու, 1687, Նոր Ջուղա, Մատենադարան, ձեռ. № 8443։

33 Լ. Խաչիկյան, նշված աշխ., էջ 78։

34 З. Р. Тараян, Набойка в Армении, Ереван, 1978. 1677 թ. հայ վաճառական Դոմինիկ Ալիալի նախաձեռնությամբ Ֆրանսիայում բացվում է դաշի արվեստանոց, իսկ 1699 թ. անգլիացիները դիմում են Նոր Ջուղայի հայերին, տեղական զարդանախշերով չիթի կտորներ պատրաստելու առաջարկով, որի մեծ պահանջը կար Անգլիայում։ Նույն տեղում, էջ 47—48։

35 Victoria and Albert Museum, Brief Guide to oriental Painted, Layed and Printed Textiles, London, 1950, p. 7, 20; Raymond Koechlin, Gaston Migeon, Art musulman cent planches en couleurs céramiques, tissus, tapis, miniatures, Paris (1956).

36 Հ. Տեր-Հովհաննիսյանց. նշված աշխ., հ. II, էջ 289։

37 Cornelis de Bruyn, Travels into Moscovy, Persia and part of the East Indies..., London, 1737, p. 227։

38 Հայ կին։ Հայկական տարազ։ Ուսումնասիրություն և նկարները Առաքել Պատրիկի, Երևան, 1983, տախտակ 77։

39 Հետագայում ասեղնագործության հայտնի կենտրոն էր Նոր Ջուղայի սբ. Կատարինե կուսանոցը։ Սերիկ Դավթյան, Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972, էջ 34։

40 Կոստանդ Ջուղայեցի, ձեռ. 5994։